ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Պ.Ռ.Ա.Կ» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Ֆ. Զալինյանին

Հարգելի Ֆ. Զալինյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի(այսուհետ՝ Գնորդ) և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **29.01.2021թ.**-ին կնքված **ԱՔ-Թ9Մ-ԳՀԱՊՁԲ-20/1-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ դեկտեմբեր ամսվանից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ և թե՛ բանավոր ապրանքի մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով **«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը** հարկադրված է 2021թ. դեկտեմբերի 7-ից Պայմանագիրը չկատարված մասով մասնակի միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ համապատասխանաբար **6533853 (վեց միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ**, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրենի ժ/պ՝ Լ.Մուրադյան